«Կառավարման տեղեկատվական համակարգեր»
Մագիստրոսական ծրագիր (առկա ցերեկային 2 տարի)

Ընդհանուր տեղեկություն

«Կառավարման տեղեկատվական համակարգեր» մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից բիզնեսի և կառավարման ոլորտում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի ներդրման և կիրառման ունակություններ տրամադրելուն: Ծրագիրը նպատակաուղղված է նաև տնտեսության այլ ոլորտներում տեղեկատվական համակարգերի կառավարման և կազմակերպչական սպասարկման և շահագործման մասնագետներ պատրաստելուն, որոնք բավականաչափ խորությամբ տիրապետում են նաև հաշվողական համակարգերի տեխնիկական և ծրագրային ենթահամակարգերին: «Կառավարման տեղեկատվական համակարգեր»-ի մասնագետը բացի դասական կառավարման ունակություններից տիրապետում է նաև տնտեսության կառավարման նոր մոդելներին և յուրահատկություններին որոնք առաջանում են տնտեսության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման արդյունքում:

Ծրագիրը հենվում է բիզնեսի և հանրային կառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի գործունեության հիմնական ուղղությունների վրա՝ ինչպես օրինակ Էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային կառավարության համակարգերի, կառավարչական որոշումների կայացման համակարգերի համակարգչային ցանցերի կառավարման և անվտանգության և տվյալների կառավարման, կորպորատիվ տեղեկատվական համակարգերի Ծրագիրը իր մեջ ներառում է ընդհանուր տնտեսագիտական առանցքային մոդուլներ, ինչպիսիք են ձեռնարկատիրության, կառավարման և բիզնեսի և այլն: Վերջիններս անհրաժեշտ են տեղեկատվական համակարգերի ներդրման խնդիրների ժամանակ: Կրթական ծրագրի շրջանակներում մագիստրանտները կուսումնասիրեն նաև բիզնեսի տեխնոլոգիական ոլորտները:

Շրջանավարտներին տրվում է ***կառավարման մագիստրոսի որակավորում***:

Շրջանավարտները աշխատաշուկայում կարող են զբաղեցնել կառավարման ոլորտի այնպիսի դիրքեր, որոնք պահանջում են առավել խորը և գիտական մակարդակի տնտեսագիտական և տեխնիկական ունակություններ:

Մասնագիտության նկարագիրը

«Կառավարման տեղեկատվական համակարգեր»-ի մասնագետը ունի կառավարչական և տեխնոլոգիական այնպիսի ունակոթյուններ, որոնք այսօր անհրաժեշտ է յուրաքանչյուր կառավարիչի: Այդ մասնագետը նախ և առաջ տիրապետում է կառավարման դրույթներին և միաժամանակ օժտված է համակարգչային ոչ խորը տեխնիկական գիտելիքներով: Կառավարման տեղեկատվական համակարգերը անհրաժեշտորեն կիրառվում և առավել արդյունավետ են դարձնում այնպիսի գործառույթներ, ինչպես օրինակ ընկերության արատաքին գործառույթներն են, շուկայի կառավարումը, ֆինանսական գործառույթները՝ հատկապես գլոբալ ցանցում (ինտերնետում) կազմակերպվող մատակարարման, վաճառքի, մարքեթինգային և ֆինանսական ծառայությունները:

Բակալավրիական ծրագիրը իր մեջ ներառում է նաև կառավարման տեսության առանցքային բաժիններ, ինչպես օրինակ ռիսկերի կառավարումը, կառավարման արդյունավետության գնահատումը, որոնք խիստ կարևոր կառավարման տարբեր մակարդակներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հարցերում:

Աշխատանքի հնարավորություններ

Կրթական ծրագիրը նպատակաուղղված է այնպիսի կառավարիչների պատրաստմանը, որոնց պահանջարկը աշխատանքի շուկայում անհամեմատ բարձր է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպություններում:

Ծրագրի շրջանավարտները պահանջված կլինեն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններում՝ որպես ոլորտի կառավարման բարձրագույն կրթությամբ տնտեսագիտական և կառավարչական գիտելիքներ ունեցող մասնագետներ, որոնք կզբաղվեն այդ ընկերությունների կառավարմամբ,

ֆինանսական և մարքեթինգային գործառույթներով: Հարկ է նշել, որ ՏՏ ընկերությունները մեր երկրում առաջարկում են այդ մասնագետների համար համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղեր: Առկա է ՏՏ ընկերությունների քանակական աճ, որի հետևանքով առաջ է գալիս համապատասխան աշխատուժ ներգրավելու խնդիրը, ինչը վկայում է այն մասին, համապատասխան ներուժ ունեցող աշխատուժի նկատմամբ պահանջարկն աճում է:

Բացի ՏՏ ոլորտից, շրջանավարտը կարող է աշխատել այլ բնույթի բիզնես ձեռնարկություններում և կազմակերպություններում՝ զբաղեցնելով նախ և առաջ կառավարչական բնույթի պաշտոններ, որոնք առընչվում են տեղեկատվության և տեխնոլոգիաների հետ:

Ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել բազաբնույթ պաշտոններ նաև կառավարության տարբեր ստորաբաժանումներում, ճյուղային նախարարություններում և պետական այլ մարմիններում: